



# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

№ 0015, ք. Երևան, Արգելափակ 1

1070-Ա

№

14 րոպեի 2013 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՏՄԵՐԿ ՌԲՄԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՊԼԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N 919-Ն որոշման կատարումն ապահովելու նպատակով:

1. Հաստատել Երևան քաղաքի սեյսմիկ կառավարման պլանը՝ համաձայն N1 հավելվածի /իր հավելվածներով/
- 1) Հետևանքների սցենարը՝ համաձայն N 1.1 հավելվածի.
- 2) Սեյսմիկ աղետի հետևանքների մարտահրավերի պլանը՝ համաձայն N 1.2 հավելվածի.
- 3) Աշխատանքների շարունակականության պլանը՝ համաձայն N 1.3 հավելվածի.
- 4) Հիերարխիայի վերլուծության մեթոդը՝ ծրագրերի առաջնահերթությունը սահմանելու համար՝ համաձայն N 1.4 հավելվածի.
- 5) Գործողությունների պլանները՝ համաձայն N 1.5 հավելվածի:
2. Բոլոր հիմնարկների, կազմակերպությունների, ընկերությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին՝
  - 1) օրինակելի պլանների հաստատումից հետո, 12-ամսյա ժամկետում մշակել համապատասխան պլաններ և համաձայնեցնել Երևան քաղաքի փրկարարական վարչության հետ.
  - 2) առնվազն տարին մեկ անգամ անցկացնել սեյսմիկ պաշտպանության վարժանքներ:
  3. Կոանգվոր օբյեկտների տնօրեններին՝
    - 1) վերականգնել և պատրաստակամության վիճակում պահել բնակչության ազդարարման միջոցները.
    - 2) կազմակերպումների անձնակազմին ապահովել անհատական պաշտպանության միջոցներով:
  4. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ սեփական որոշմամբ սահմանել թաղային միավորները և ապահովել համապատասխան պլանների մշակումն ու համաձայնեցումը Երևան քաղաքի փրկարարական վարչության հետ:
  5. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին՝ ստեղծել և պարբերաբար թարմացնել անհրաժեշտ էլեկտրոնային քարտեզները:
  6. Առաջարկել՝
    - 1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը 12-ամսյա ժամկետում մշակել համապատասխան պլանների օրինակելի ձևերը.

- 2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Երևան քաղաքի փրկարարական վարչության պետին՝ տարին մեկ անգամ այն որոշման համապատասխան հավելվածներում կատարել ճշգրտումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նախապատրաստել փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ:
7. Մոյն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևան քաղաքի փրկարարական վարչության պետ, փ/ճ գերատես U. Ղազարյանի վրա:
8. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ